Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԳՈՐԾԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԵՃԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

3 հունիսի 2024 թվական քաղաք Երևան

ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահ Լիլիթ Թադևոսյանս, ՀՀ Վճռաբեկ դատարանի վարչական պալատի նախագահ Հովսեփ Բեդևյանս, ՀՀ Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի նախագահ Գոռ Հակոբյանս, ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահ Համլետ Ասատրյանս, ՀՀ Վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատի նախագահ Արթուր Դավթյանս, նիստում ուսումնասիրելով թիվ ՎԴ/3627/05/24 գործի ենթակայությունը որոշելու նպատակով այն ՀՀ Վճռաբեկ դատարան ուղարկելու վերաբերյալ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի՝ 2024 թվականի մայիսի 7-ի որոշումը,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի Ն Ք

<u>Գործի դատավարական նախապատմությունը</u>.

1. Արամ Թորոսյանը 2024 թվականի ապրիլի 1-ին հայցադիմում է ներկայացրել (փոստին է հանձնել) ՀՀ վարչական դատարան ընդդեմ Երևանի քաղաքապետարանի՝ Երևան համայնքում՝ մասնավորապես Թումանյան փողոցում՝ Մաշտոցի պողոտայից դեպի Տերյան փողոց պարփակված հատվածում, կենսունակությունը կորցրած ծառերի փոխարինման (դրանց հատումով ուղեկցված) գործողությունը ոչ իրավաչափ ճանաչելու պահանջի մասին:

2. ՀՀ վարչական դատարանի՝ 2024 թվականի ապրիլի 11-ի որոշմամբ հայցադիմումը վերահասցեագրվել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանին:

3. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի՝ 2024 թվականի մայիսի 7-ի որոշմամբ գործի ենթակայությունը որոշելու նպատակով այն ուղարկվել է ՀՀ Վճռաբեկ դատարան:

4. Գործը ՀՀ Վճռաբեկ դատարանում ստացվել է 2024 թվականի մայիսի 21-ին:

<u>Ենթակայության վերաբերյալ վեճի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.</u>

5. Հղում կատարելով «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասին, 24-րդ հոդվածի 1-ին մասին, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասին, 10-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերին, 78-րդ հոդվածի 2-րդ մասին, 81-րդ հոդվածի 1-ին մասին, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածին, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածին, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածին, 3-րդ հոդվածի 1-ին մասին, 9-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 5-րդ մասերին, ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ 2011 թվականի հուլիսի 27-ի թիվ ԵԱՔԴ/0433/02/11, 2016 թվականի ապրիլի 22-ի թիվ ՎԴ/0830/05/14 գործերով արտահայտած իրավական դիրքորոշումներին՝ ՀՀ վարչական դատարանը 2024 թվականի ապրիլի 11-ի որոշմամբ հայցադիմումը վերահասցեագրել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանին՝ հետևյալ պատճառաբանությամբ. *«(...) Դատարանը գտնում է, որ հայցվորի կողմից ներկայացված պահանջը բխում է քաղաքացիաիրավական հարաբերություններից, քանի որ խնդրո առարկա գործողությունները կատարվել են «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ի կողմից, որը շահույթ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող ոչ առևտրային կազմակերպություն է և չի հանդիսանում վարչական մարմին, հետևաբար վերջինիս կողմից իրականացվող գործողությունները դատարանի*

գնահատմամբ վարչարարություն չեն, և չեն բխում հանրային իրավահարաբերություններից»[1]:

6. Հղում կատարելով «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 20-րդ հոդված 1-ին մասին, 24-րդ հոդվածի 1-ին մասին, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի 1-ին մասին, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասին, 10-րդ հոդվածի 1-ին մասին, 15-րդ հոդվածի 1-ին մասին, 21-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերին, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածին, ՀՀ Սահմանադրական դատարանի՝ 2009 թվականի փետրվարի 3-ի թիվ ՍԴՈ-787 որոշմանը, ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ 2011 թվականի հուլիսի 27-ի թիվ ԵԱՔԴ/0433/02/11, 2016 թվականի ապրիլի 22-ի թիվ ԵՄԴ/1029/02/14 և 2022 թվականի հոկտեմբերի 7-ի թիվ ԵԴ/21964/02/18 գործերով արտահայտած իրավական դիրքորոշումներին՝ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը 2024 թվականի մայիսի 7-ի որոշմամբ գտել է, որ սույն գործը ենթակա չէ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանին և այդ առնչությամբ դիմել է ՀՀ Վճռաբեկ դատարան՝ նշելով հետևյալը. *«(…) [Տ]վյալ դեպքում, քննարկման առարկա իրավահարաբերության կողմերն են Երևան համայնքը՝ ի դեմս Երևանի քաղաքապետարանի, հայցվորը, ի դեմս՝ Արամ Թորոսյանի, վեճի առարկան է հանդիսանում Երևանի քաղաքապետարանի՝ Երևան համայնքում՝ մասնավորապես Թումանյան փողոցում՝ Մաշտոցի պողոտայից դեպի Տերյան փողոց պարփակված հատվածում, կենսունակությունը կորցրած ծառերի փոխարինման (դրանց հատումով ուղեկցված) վերաբերյալ գործողությունների իրավաչափության ստուգումը: Վերը նշված ողջ գործընթացի իրականացումը հանրային իրավական է, այսինքն՝ ողջ գործընթացը հանրային իրավունքի նորմերի կարգավորման տիրույթում է: Արդյունքում, Դատարանը գտնում է, որ կողմերի միջև առկա վեճը ոչ թե քաղաքացիական, այլ հանրային իրավահարաբերություններ են և դրանք ենթակա չեն քննության քաղաքացիական դատավարության կարգով:*

---

[1] Տե՛ս դատական գործը, թերթեր 62-67:

Իսկ ինչ վերաբերում է վարչական դատարանի կողմից վկայակոչված հայցադիմումին կից ներկայացված «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ի գործառույթներին և «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ի՝ Երևանի քաղաքապետարանի կողմից կայացված որոշումներում ունեցած դերակատարմանն ու նշանակությանը, ապա Դատարանի գնահատմամբ դրանք հանդիսանում են այն ապացույցները, որոնց գնահատման արդյունքում դատարանը հանգում է հետևության վարչական ակտի իրավաչափության վերաբերյալ:

Ավելին, հայցադիմումի ուսումնասիրությունից հստակ երևում է, որ հայցվորը Երևանի քաղաքապետարանի գործողության իրավաչափությունը վիճարկելիս հայցի հիմքում, ի թիվս այլնի, դրել է «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ի՝ ծառերի փոխարինման ծրագրով եզրակացություն տալու իրավասության բացակայության հանգամանքը և ոչ թե վիճարկել է «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ի գործողությունների իրավաչափությունը:

Հիմք ընդունելով վերոգրյալը, հաշվի առնելով այն հանգամանքը, որ տվյալ դեպքում գործը հետագա քննության համար ստացած Դատարանը համաձայն չէ գործի ենթակայության հետ և հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածի 2-րդ մասի կարգավորումները՝ Դատարանը գտնում է, որ թիվ ՎԴ/3627/05/24 գործը պետք է ուղարկել ՀՀ վճռաբեկ դատարան՝ դրա ենթակայությունը որոշելու համար»[2]:

<u>Սույն որոշման հիմնավորումները և եզրահանգումը</u>.

7. Սույն գործով բարձրացված իրավական հարցը հետևյալն է. *հիմնավո՞ր է արդյոք Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի հետևությունն այն մասին, որ թիվ ՎԴ/3627/05/24 գործն ըստ հայցի՝ Արամ Թորոսյանի ընդդեմ Երևանի քաղաքապետարանի՝ Երևան համայնքում՝ մասնավորապես Թումանյան փողոցում՝ Մաշտոցի պողոտայից դեպի Տերյան փողոց պարփակված հատվածում, կենսունակությունը կորցրած ծառերի փոխարինման (դրանց հատումով ուղեկցված) գործողությունը ոչ իրավաչափ*

[2] Տե՛ս դատական գործը, թերթեր 73-77:

ճանաչելու պահանջի մասին, ենթակա չէ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանին:

8. «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *«Մասնագիտացված դատարաններն են՝*

1) վարչական դատարանը. (...)»:

Նույն օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը քննում է դատական կարգով քննության ենթակա բոլոր գործերը, բացառությամբ մասնագիտացված դատարանների ենթակայությանը վերապահված գործերի»:*

Նույն օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Վարչական դատարանին են ենթակա Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված գործերը»:*

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Քաղաքացիական գործերը ենթակա են քննության առաջին ատյանի դատարանում, բացառությամբ «Մանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված դեպքերի և հակակոռուպցիոն դատարանին ենթակա գործերի»:*

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *«Քաղաքացիական են համարվում իրավունքի մասին վեճի հետ կապված բոլոր գործերը, բացառությամբ Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի (...) կամ Սահմանադրական դատարանի իրավասությանը վերապահված գործերի»:*

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածի համաձայն՝ *«(...) 2. Դատարանը յոթնօրյա ժամկետում որոշում է կայացնում վարչական դատարանից վերահասցեագրված հայցադիմումը վարույթ ընդունելու կամ գործը Վճռաբեկ դատարան ուղարկելու մասին, եթե համաձայն չէ գործի ենթակայությանը:*

(...)

6. Սույն հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով նախատեսված դեպքերում Վճռաբեկ դատարանի նախագահը և Վճռաբեկ դատարանի բոլոր պալատների

նախագահները գործը Վճռաբեկ դատարանում ստանալու պահից տասնօրյա ժամկետում որոշում են գործի ենթակայությունը:

7. Սույն հոդվածի 6-րդ մասով նախատեսված որոշումն ընդունելու համար Վճռաբեկ դատարանի նախագահը հրավիրում է նիստ՝ իր և Վճռաբեկ դատարանի բոլոր պալատների նախագահների մասնակցությամբ, որն իրավազոր է, եթե դրան մասնակցում են նիստին մասնակցելու իրավունք ունեցող բոլոր անձինք:

8. Սույն հոդվածի 6-րդ մասով նախատեսված որոշումն ընդունվում է նիստին ներկա անձանց ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ: Քվեարկելիս ձեռնպահ մնալ չի թույլատրվում: Որոշմանը կողմ քվեարկած դատավորների կազմից և նրանց կողմից որոշված դատավորը կազմում է որոշման նախագիծը:

9. Սույն հոդվածով սահմանված կարգով որոշված դատարանը համարվում է իրավասու դատարան:

10. Սույն հոդվածի 6-րդ մասով սահմանված կարգով գործի ենթակայությունը սահմանելու մասին որոշում կայացվելու դեպքում չի կարող վերաքննիչ բողոք բերվել սույն օրենսգրքի 365-րդ հոդվածի 2-րդ մասի 11-րդ կետի հիմքով այն պատճառաբանությամբ, որ գործը ենթակա չի եղել քննության քաղաքացիական դատավարության կարգով»:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 126-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ *«Առաջին ատյանի դատարանը մերժում է հայցադիմումի ընդունումը, եթե գործը ենթակա չէ քննության քաղաքացիական դատավարության կարգով»:*

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Վարչական դատարանին ընդդատյա են հանրային իրավահարաբերություններից ծագող բոլոր գործերը, (...)»:*

«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 30-րդ կետի համաձայն՝ *«Ավագանին որոշում է ընդունում Երևանի ընդհանուր օգտագործման կանաչ տարածքների պահպանման և օգտագործման կանոնների վերաբերյալ»:*

Նույն օրենքի 55-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Քաղաքաշինության և կոմունալ տնտեսության բնագավառներում քաղաքապետը իրականացնում է հետևյալ սեփական լիազորությունները. (. . .)*

11) կազմակերպում է աղբահանությունը, քաղաքային նշանակության փողոցների, հրապարակների, այգիների և ընդհանուր օգտագործման այլ հասարակական վայրերի մաքրումը, բարեկարգումը և կանաչապատումը. (. . .)»:

Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի նոյեմբերի 18-ի՝ «Երևան քաղաքի ընդհանուր օգտագործման կանաչ տարածքների պահպանման և օգտագործման կանոնները հաստատելու մասին» թիվ 36-Ն որոշմամբ հաստատվել են Երևան քաղաքի ընդհանուր օգտագործման կանաչ տարածքների պահպանման և օգտագործման կանոնները՝ համաձայն հավելվածի (այսուհետ՝ Հավելված):

Հավելվածի 6-րդ կետի համաձայն՝ *«Սույն կանոնների նկատմամբ հսկողությունը և դրանց կատարման ապահովումը իրականացնող լիազորված մարմինը կամ պաշտոնատար անձը (անձինք) սահմանվում են Երևանի քաղաքապետի կողմից (այսուհետ՝ լիազորված մարմին)»:*

Հավելվածի 13-րդ կետի համաձայն՝ *«Ծառերի կամ թփերի էտումը կամ հատումը, ինչպես նաև բուսաշերտի տեղահանումը կամ հողաշերտի պինդ ծածկույթով փոխարինումն իրականացվում է լիազորված մարմնի կողմից տրված թույլտվության առկայության դեպքում»:*

Երևանի քաղաքապետի՝ 2020 թվականի հուլիսի 24-ի թիվ 2199-Ա որոշման 1-ին կետի համաձայն՝ *«Հիմք ընդունելով Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի նոյեմբերի 18-ի N36-Ն որոշման հավելվածի 6-րդ կետը.*

Երևան քաղաքի ընդհանուր օգտագործման կանաչ տարածքների պահպանման և օգտագործման կանոնների նկատմամբ հսկողության և դրանց կատարման ապահովման լիազոր պաշտոնատար անձ սահմանել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի բնապահպանության վարչության պետին»:

Երևանի քաղաքապետի 2021 թվականի ապրիլի 26-ի՝ «Երևան քաղաքում ծառերի հատման և դրանցից գոյացող փայտանյութի հաշվառման կարգը և ծառահատման տոմսի ձևը հաստատելու մասին» թիվ 1236-Ա որոշմամբ հաստատված հավելվածի 2-րդ կետի համաձայն՝ *«Երևան քաղաքի վարչական սահմաններում ընդհանուր օգտագործման կանաչ տարածքներում ծառահատումներն իրականացվում են «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կամ ընդհանուր օգտագործման կանաչ տարածքների Վարձակալ*

կազմակերպությունների (այսուհետ՝ Կազմակերպություն) կողմից՝ լիազոր պաշտոնատար անձի թույլտվության հիման վրա»:

9. Հանրային և մասնավոր իրավահարաբերությունների տարանջատման հարցին ՀՀ Վճռաբեկ դատարանը մանրամասն անդրադարձ է կատարել *«Վեստ» ՍՊԸ-ն ընդդեմ ՀՀ էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության, երրորդ անձ «ՄաքԴոնալդս Քորփորեյշն» ընկերություն* վարչական գործով կայացված որոշման շրջանակներում՝ արձանագրելով հետևյալը. *«(…) Հանրային իրավահարաբերությունը մասնավոր հարաբերությունից տարանջատվում է թե՛ սուբյեկտային կազմով, թե՛ բովանդակությամբ և թե՛ օբյեկտով: Այդ տարրերն առանձին-առանձին անհրաժեշտ են, իսկ իրենց համակցության մեջ բավարար են, որպեսզի փաստվի իրավահարաբերության հանրային լինելու հանգամանքը: Իրավահարաբերությունը հանրային հատկանիշով բնութագրելու համար նախևառաջ անհրաժեշտ է, որ հարաբերության կողմ հանդես գա հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտը (վարչական մարմիններ, դրանց պաշտոնատար անձիք, այդ թվում պետական և համայնքային ծառայողներ): Մինչդեռ հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտի՝ իրավահարաբերության կողմ լինելը դեռևս չի նշանակում, որ իրավահարաբերությունը հանրային բնույթի է, քանի որ հանրային բնույթը՝ որպես իրավահարաբերության բնութագրիչ, ծավալային առումով ներառում է իրավահարաբերության թե՛ սուբյեկտային կազմը, թե՛ օբյեկտը, թե՛ բովանդակությունը և ի հայտ է գալիս միայն վերոնշյալ երեք տարրերի համակցությամբ: (…) Հանրային է այն իրավահարաբերությունը, որում կողմերից մեկի դերում անպայմանորեն հանդես է գալիս հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտը, որն այդ հարաբերության ընթացքում հանրային շահի իրացման կապակցությամբ իրացնում է օրենքով սահմանված իր հանրային իշխանական լիազորությունները (…)»*[3]:

9.1. ՀՀ Վճռաբեկ դատարանը մեկ այլ՝ *Գոռիշխան Իշիկյանն ընդդեմ ««ԱՐՄԵՆԻԱ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕԴԱՆԱՎԱԿԱՅԱՆՆԵՐ» ՓԲԸ-ի և ՀՀ Կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության,*

[3] Տե՛ս ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ *«Վեստ» ՍՊԸ-ն ընդդեմ ՀՀ էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության, երրորդ անձ «ՄաքԴոնալդս Քորփորեյշն» ընկերություն*՝ վարչական գործով 2016 թվականի ապրիլի 22-ի թիվ ՎԴ/0830/05/14 որոշումը:

երրորդ անձ Հռիփսիմե Իշիկյանի քաղաքացիական գործով կայացված թիվ ԵՄԴ/1029/02/14 որոշմամբ արձանագրել է. *«Հանրային է այն իրավահարաբերությունը, որում կողմերից մեկի դերում անպայմանորեն հանդես է գալիս հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտը, որն այդ հարաբերության ընթացքում հանրային շահի իրացման կապակցությամբ իրացնում է օրենքով սահմանված իր հանրային իշխանական լիազորությունները: Իրավահարաբերության հանրային լինելու և դրանից բխող վեճը վարչական դատարանին ընդդատյա լինելու հանգամանքը պարզելու նպատակով պետք է գնահատման առարկա դարձվեն հետևյալ հանգամանքները.*

1. արդյո՞ք իրավահարաբերության կողմերից մեկը հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտ է, թե՝ ոչ,

2. արդյո՞ք այդ իրավահարաբերության բովանդակությունը կազմում է հանրային իշխանական լիազորությամբ օժտված սուբյեկտի կողմից իր հանրային իշխանական լիազորությունների իրականացման պարտականությունը, թե՝ ոչ,

3. արդյո՞ք այդ իրավահարաբերությունը ծագել է հանրային շահի իրացման կապակցությամբ (իրավահարաբերությունն ուղղված է եղել հանրային շահի՝ սոցիալ-իրավական պրակտիկայում իրացմանը և առարկայացմանը), թե՝ ոչ:

Միայն վերոգրյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում է հնարավոր փաստել իրավահարաբերության հանրային լինելու հանգամանքը, ինչպես նաև այդ հարաբերությունից բխող վեճերի ընդդատության հարցը՝ հաշվի առնելով նաև այն կարևոր հանգամանքը, որ հանրային հարաբերություններից բխող բոլոր վեճերը չեն, որ վերապահված են վարչական դատարանի քննությանը, (…)»[4]:

10. Սույն որոշման 8-9.1-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների վերլուծությունից և մեջբերված իրավական դիրքորոշումներից հետևում է, որ օրենսդիրն առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին է վերապահել այն բոլոր գործերը, որոնց քննությունը վերապահված չէ

---

[4] Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Գոռիշիան Իշիկյանն ընդդեմ ««ԱՐՄԵՆԻԱ» ՄԻՔԱԶԳԱՅԻՆ ՕԴԱՆԱՎԱԿԱՅԱՆՆԵՐ» ՓԲԸ-ի և ՀՀ Կառավարության առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության, երրորդ անձ Հռիփսիմե Իշիկյանի* քաղաքացիական գործով 2016 թվականի ապրիլի 22-ի թիվ ԵՄԴ/1029/02/14 որոշումը:

մասնագիտացված դատարաններին, այդ թվում՝ վարչական դատարանին: Միևնույն ժամանակ, օրենսդիրը սահմանել է վարչական դատարանի ընդդատության շրջանակը, որում ներառված են հանրային իրավահարաբերություններից բխող վեճերի վերաբերյալ գործերը: Փաստորեն, որևէ դատական գործի՝ վարչական կամ առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանում քննության ենթակա լինելու հարցը որոշվում է՝ հիմք ընդունելով այն իրավահարաբերության բնույթը (մասնավոր կամ հանրային), որից բխող վեճը հանձնվում է դատարանի քննությանը:

Անդրադառնալով Երևան համայնքում կենսունակությունը կորցրած ծառերի փոխարինման (ծառերի հատման) գործողությունների կապակցությամբ առաջացող իրավահարաբերությունների բնույթին՝ անհրաժեշտ է նշել, որ Երևանի ընդհանուր օգտագործման կանաչ տարածքների պահպանման և օգտագործման կանոնները որոշելու իրավասությունը վերապահված է Երևանի ավագանուն, իսկ այդ կանոնների նկատմամբ հսկողությունը և դրանց կատարման ապահովումն իրականացնում է Երևանի քաղաքապետի կողմից սահմանված լիազորված մարմինը, տվյալ դեպքում՝ Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի բնապահպանության վարչության պետը: Այսինքն՝ լիազորված մարմինը Երևանի քաղաքապետարանի սահմանած պաշտոնատար անձն է, ում թույլտվության առկայության դեպքում է միայն հնարավոր իրականացնել ծառահատում:

Միաժամանակ, Երևան քաղաքի վարչական սահմաններում ընդհանուր օգտագործման կանաչ տարածքներում ծառահատումներն իրականացնելու գործառույթը, Երևանի քաղաքապետի որոշմամբ, վերապահվել է «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը կամ ընդհանուր օգտագործման կանաչ տարածքների վարձակալ կազմակերպություններին:

Վերոգրյալից հետևում է, որ «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ի գործառույթները սահմանափակվում են՝ փաստացի Երևան քաղաքի վարչական սահմաններում ընդհանուր օգտագործման կանաչ տարածքներում ծառահատումների աշխատանքներն իրականացնելով: Ըստ այդմ՝ «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ը չի հանդիսանում ծառահատումների իրականացման շուրջ ծագող

իրավահարաբերություններում պետաիշխանական լիազորություններ ունեցող սուբյեկտ, այլ ընդամենն իրագործում է Երևանի քաղաքապետի կողմից սահմանված՝ լիազորված մարմնի թույլտվությամբ կատարվող ծառահատումների աշխատանքները:

Այսինքն՝ առանց լիազորված մարմնի՝ Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի բնապահպանության վարչության պետի կողմից տրված թույլտվության, «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ն իրավասու չէ ինքնուրույն, սեփական հայեցողությամբ իրականացնելու ծառերի հատում:

Հետևաբար Երևան քաղաքի վարչական սահմաններում ընդհանուր օգտագործման կանաչ տարածքներում ծառահատումների իրականացման առնչությամբ ծագող վեճը բխում է այնպիսի իրավահարաբերությունից, որի բովանդակությունը հանգում է հանրային իշխանական լիազորությամբ օժտված սուբյեկտի՝ Երևանի քաղաքապետարանի՝ ի դեմս համապատասխան պաշտոնատար անձի կողմից ծառերի հատման վերաբերյալ թույլտվություն տալու կապակցությամբ հանրային իշխանական լիազորությունների իրականացման պարտականությանը, իսկ քննության ենթակա պահանջի հիմքում ընկած վիճելի իրավահարաբերությունն ուղղված է հանրային շահի ապահովմանը:

11. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից հետևում է, որ.

- Արամ Թորոսյանը 2024 թվականի ապրիլի 1-ին հայցադիմում է ներկայացրել (փոստին է հանձնել) ՀՀ վարչական դատարան ընդդեմ Երևանի քաղաքապետարանի՝ Երևան համայնքում՝ մասնավորապես Թումանյան փողոցում՝ Մաշտոցի պողոտայից դեպի Տերյան փողոց պարփակված հատվածում, կենսունակությունը կորցրած ծառերի փոխարինման (դրանց հատումով ուղեկցված) գործողությունը ոչ իրավաչափ ճանաչելու պահանջի մասին[5],

- ՀՀ վարչական դատարանը 2024 թվականի ապրիլի 11-ի որոշմամբ հայցադիմումը վերահասցեագրել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանին՝ այն պատճառաբանությամբ, որ ներկայացված պահանջը բխում է քաղաքացիաիրավական հարաբերություններից, քանի որ խնդրո առարկա գործողությունները կատարվել են «Կանաչապատում և

[5] Տե՛ս սույն որոշման 1-ին կետը:

շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ի կողմից, որը շահույթ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող ոչ առևտրային կազմակերպություն է և չի հանդիսանում վարչական մարմին, հետևաբար վերջինիս կողմից իրականացվող գործողությունները դատարանի գնահատմամբ վարչարարություն չեն, և չեն բխում հանրային իրավահարաբերություններից[6],

- Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը 2024 թվականի մայիսի 7-ի որոշմամբ գտել է, որ սույն գործը ենթակա չէ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանին և այդ առնչությամբ դիմել է ՀՀ Վճռաբեկ դատարան՝ նշելով, որ քննարկման առարկա իրավահարաբերության կողմերն են Երևան համայնքը՝ ի դեմս Երևանի քաղաքապետարանի, հայցվորը՝ ի դեմս Արամ Թորոսյանի, վեճի առարկան է հանդիսանում Երևանի քաղաքապետարանի՝ Երևան համայնքում՝ մասնավորապես Թումանյան փողոցում՝ Մաշտոցի պողոտայից դեպի Տերյան փողոց պարփակված հատվածում, կենսունակությունը կորցրած ծառերի փոխարինման (դրանց հատումով ուղեկցված) վերաբերյալ գործողությունների իրավաչափության ստուգումը[7]:

12. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 8-10-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ հարկ է նկատել, որ Արամ Թորոսյանը վիճարկում է Երևան համայնքում, առանց համապատասխան ՇՄԱԳ եզրակացության, կենսունակությունը կորցրած ծառերի փոխարինման (ծառերի հատման) գործողությունների իրավաչափությունը:

Նշված իրավահարաբերությունում՝

- կողմերից մեկը հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտ է՝ Երևանի քաղաքապետարանը, որը տվյալ իրավահարաբերությունում իրացնում է քաղաքաշինության և կոմունալ տնտեսության բնագավառներում օրենքով իրեն վերապահված լիազորությունները,

- իրավահարաբերության բովանդակությունը կազմում է հանրային իշխանական լիազորությամբ օժտված սուբյեկտի՝ Երևանի քաղաքապետարանի՝ ի

---

[6] Տե՛ս սույն որոշման 5-րդ կետը:
[7] Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:

դեմս վերջինիս իրավասու պաշտոնատար անձի կողմից իր հանրային իշխանական լիազորությունների իրականացման պարտականությունը, այն է՝ Երևան քաղաքի վարչական սահմաններում ընդհանուր օգտագործման կանաչ տարածքներում ծառահատումներն իրականացնելու թույլտվություն տրամադրելը,

- իրավահարաբերությունը ծագել է հանրային շահի իրացման կապակցությամբ, այսինքն՝ ուղղված է եղել հանրային շահի իրացմանը՝ Երևան քաղաքի վարչական սահմաններում ընդհանուր օգտագործման կանաչ տարածքներում կանաչապատման իրականացմանը:

Վերոգրյալը հիմք է տալիս փաստելու, որ սույն գործով իրավական վեճը բխում է ոչ թե մասնավոր, այլ հանրային իրավահարաբերություններից:

13. Վերը նշվածից հետևում է, որ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի հետևությունն այն մասին, որ թիվ ՎԴ/3627/05/24 գործն ըստ հայցի՝ Արամ Թորոսյանի ընդդեմ Երևանի քաղաքապետարանի՝ Երևան համայնքում՝ մասնավորապես Թումանյան փողոցում՝ Մաշտոցի պողոտայից դեպի Տերյան փողոց պարփակված հատվածում, կենսունակությունը կորցրած ծառերի փոխարինման (դրանց հատումով ուղեկցված) գործողությունը ոչ իրավաչափ ճանաչելու պահանջի մասին, ենթակա չէ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանին, հիմնավոր է:

Վերոգրյալը հիմք է տալիս փաստելու, որ Արամ Թորոսյանի հայցադիմումի հիման վրա հարուցված թիվ ՎԴ/3627/05/24 գործը ենթակա է ՀՀ վարչական դատարանի քննությանը:

Հիմք ընդունելով վերոշարադրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն Ք

թիվ ՎԴ/3627/05/24 գործն ըստ հայցի՝ Արամ Թորոսյանի ընդդեմ Երևանի քաղաքապետարանի՝ Երևան համայնքում՝ մասնավորապես Թումանյան փողոցում՝ Մաշտոցի պողոտայից դեպի Տերյան փողոց պարփակված հատվածում, կենսունակությունը կորցրած ծառերի փոխարինման (դրանց հատումով ուղեկցված)

գործողությունը ոչ իրավաչափ ճանաչելու պահանջի մասին, ենթակա է ՀՀ վարչական դատարանին:

ՀՀ ՎՃՌԱԲԵԿ
ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ
ԼԻԼԻԹ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

ՀՀ ՎՃՌԱԲԵԿ
ԴԱՏԱՐԱՆԻ
ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱԼԱՏԻ
ՆԱԽԱԳԱՀ
ՀՈՎՍԵՓ ԲԵԴԵՎՅԱՆ

ՀՀ ՎՃՌԱԲԵԿ
ԴԱՏԱՐԱՆԻ
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ
ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ
ԳՈՌ ՀԱԿՈԲՅԱՆ

ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ
ՔՐԵԱԿԱՆ ՊԱԼԱՏԻ
ՆԱԽԱԳԱՀ
ՀԱՄԼԵՏ ԱՍԱՏՐՅԱՆ

ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ
ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՊԱԼԱՏԻ
ՆԱԽԱԳԱՀ
ԱՐԹՈՒՐ ԴԱՎԹՅԱՆ